



## ՎՐԵՑ ԿԵԸՆՔԻՑ ԵՒ ԴՐԸԿՇՆՈՒԹԻՒՆԻՑ

Նոր ուսումնասիրութիւններ «Ընձենաւորը» պոէմայի մասին: —Ամայութիւն գեղարուեստական գրականութեան մէջ և ծերացած զրողները: —Մի նոր վերք հայ-կաթոլիկների մասին: —Պ. Գ. Սունդուկեանցը և վրացիք:

Վերջին երկու ագիսը վրաց մամուլի և գրականութեան մէջ կարելի է կոչել Շոթա Ռուսթաւելու օրեր, Ռուսթաւելու տօն: Երբէք վրացերէն լեզուով մի այդպիսի կարճ ժամանակում չէ գրուել այդքան բան՝ յիշեալ հեղինակի «Ընձենաւորը» նշանաւոր պոէմայի մասին: Սեպտեմբերի կէսին լոյս տեսած «Մոամբէ» ամսագրի 7—դ և 8—դ համարներում Ս. Քվարիանիի ուսումնասիրութիւնը «Ընձենաւորի» մասին ըլունում է 75 երես. նոյն ամսի վերջին վրաց «գրագիտութիւն տարածող» ընկերութեան հրատարած էժանագին «Ընձենաւորին» կցուած պ. Դ. Կարիճաշվիլու յառաջաբանը, ծանօթութիւնները և բառարանը բռնում են 129 երես (ինքը պոէման 262 երես է). Հոկտեմբերի ընթացքում «Խվերիա» լրագրում նոյն հարցի ուսումնասիրութեանը նույիրուեցին՝ պ. Շ. Դաւիրաշվիլու Փելիէտոնների շարքը (№№ 215, 219, 220 և 231), պ. Դ. Կարիճաշվիլու նոր բացատրութիւնները (№№ 225 և 226) և պ. Կլիֆայի յօդուածը (№ 227). Վերջապէս նոյն ամսումը տպուեց նաև «Յնորիս-Փուրցելիի» մէջ պ. Ի. Աբուլաձէի գեղեցիկ ուսումնասիրութիւնը (№№ 2292 և 2293):

Այդպիսի մի եռանգուա, լուրջ աշխատանք և այն էլ գըրողների մի ամբողջ խմբի կողմից կատարուած՝ վերին աստիճանի ուրախալի և ոգեսրիչ է մեր տեղական գրականութիւնների աղքատիկ կեանքում: Ո՞քան չնորհակալութեան արժանի գործ է լուսաբանել մի աղքային նշանաւոր գրուածք, ո՞ր

շարունակ 800 տարի պաշտուում է ժողովրդից, համարւում նըրա «փառքը», «հպարտութիւնը», «սրբութիւն սրբոցը», բայց որը միենոյն ժամանակ պարունակում է իր մէջ անթիւ չը պարզուած հարցեր, անհասկանալի կտորներ, կեղծուած ու խանգարուած տեղեր: Երևակայեցէք, որ մինչև օրս նոյնիսկ չէ ուրոշուած թէ ի՞նչ են ներկայացնում իրանցից «Ընձենաւորի» հերոսները. ումանք կարծում են, թէ նրանք Վրաստանի այլ և այլ գաւառների ժողովրդական տիպեր են. միւսները—թէ զուտ պատմական անձնաւորութիւններ են՝ թամար թագուհին և նըրա բարձրաստիճան ժամանակակիցները (մէկը հայ). ուրիշները—թէ նրանց Շոթան ստեղծել է ազգային կամ արևելեան հին աւանդութիւնների հիման վրայ, էլի ուրիշները—թէ նըրանց պէտք է ընդունել ուղղակի այնպէս, ինչպէս որ պոէմայում կան, այսինքն թէ այդ հերոսները ոչ թէ վրացի են, այլ արար, պարսիկ, հնդկաստանցի ևայլն. կերջապէս կան նաև մի կարգ քննադատաներ (Պրոֆ. Մարը), որոնք «Ընձենաւորը» չեն համարում ինքնորոյն գրուածք, այլ թարգմանուած պարսկերէնից... Դարերի ընթացքում այդ պոէմա-րումանի մէջ ներմուծուել են անխիղճ արտագրողների ձեռքով անհամար կեղծ կըտորներ, որոնց պատճէնն ու բացատրութիւնները տպւում էին որանից երկու-երեք տարի առաջ «Մոռմէք» ամսագրում տարի ու կէս շարունակ... Այդ բացարձակ կեղծիքներից յետոյ հերթը գալիս է ուղղակի սխալ կերպով արտագրուած տեղերին, որպիսի պատճառով շատ կարեոր տողերի միտքը անհասկանալի է մնում ընթերցողի համար: Եթէ այդ բոլորին աւելացնենք նաև այն, որ մենք շատ քիչ տեղեկութիւն ունենք՝ վրաց գըրողների կողմից Շէքսպիրի, Գեոթէի, Դանտէի ևայլ համաշխարհային հանճարների կարգը դասուող, ազգային «ամենամեծ», «հոյակապ» բանաստեղծ և «մեծ հումանիստ» Շոթա Ռուսթաւելու անձնաւորութեան մասին,—հասկանալի կը լինի, թէ որքան գործ կայ կատարելու այդ շրջանում, որքան ճիգեր ունեն թափելու վրացի զարգացած գրողներն ու գիտականները «Ընձենաւորն» ու նրա պարագաները լուսաբանելու համար...

Վրաց կեանքին նուիրած մեր այս ընդհանուր, թուցիկ նկատողութիւնների բաժնում չենք կարող, դժբաղբաբար, առանձին առանձին խօսել վերցիշեալ նոր ուսումնասիրութիւնների մասին: Մենք կ'աշխատենք ապագայում մի ընդարձակ յօդուած նուիրել այդ հարցին և հաղորդել նոյնպէս մեր ստացած տպաւորութիւնը «Ընձենաւորի» ընթերցումից: Զենք կարող միայն այստեղ չը յիշատակել մի տարօրինակ հանդաման-

քի մասին: Պ. Ս. Քվարիանին, գրելով իր հետաքրքիր, 75 երեսից բաղկացած ուսումնասիրութիւնը, ոգևորւում է այն մտքով, որ ինքը կարողացաւ մի նոր լոյս սփռել գործի վրայ, ապացուցանել որ «Ընձենաւորի» հերոսները անպայման (իր կարծիքով) պատմական անձնաւորութիւններ են: Նա բերում է բոլորովին նոր պատմական փաստեր, որ պոէմայի գլխաւոր հերոս Տարիելը ոչ այլ ոք է, բայց եթէ արքայորդի Դեման: Երկակայեցէք, ընթերցող, որ այդ «նոր փաստերը» տալիս է պ. Քվարիանուն... մի հայ մարդ, «Սիւնեաց պատմութեան» հեղինակ Ստեփանոս Օրբելեանը, որը մանրամասն նկարագրել է Շոթա Ռուսթաւելու ժամանակուայ անցքերը Վրաստանում, բայց որի մասին պ. Քվարիանին ամեններն չէ յիշում թէ հայ է, այլ նրա անունն ու գրքի վերնագիրը բերում է... Փրանսերէն (Stephanos Orbelian: „Histoire de la Siounie“)...

Դարձեալ մի երկու խօսք «Ընձենաւորի» մասին:

Թող ընթերցողը չը կարծէ, թէ այդ գիրքը, լինելով 12-դ դարու գործ, մի հնացած բան է այժմ: Նա պատմութիւն չէ, այլ այնպիսի մի զիրք, որ միշտ ու ամեն ժամանակ մնում է թարմ, նոր... Նա մի լուսան է, յաւիտենական եղելութիւն, բուռն սիրոյ մի երգ՝ հիւսուած չափազանց քնքոյց սիրով սիրել իմացող բանաստեղծից... Նա սիրելի է իր քարոզած բարձը, իդէալական գաղափարներով և հմայիչ՝ իր չնաշխարհիկ, դիւրաճկուն լեզուով...

Վերջին 6 ամսուայ ընթացքում վրաց մամուլի և գրականութեան մէջ մի տեսակ գեղարուեստական ամայութիւն է տիրում: Զեն գրւում վէպեր, պատմուածքներ, պոէմաներ: Մենք այստեղ աչքի առաջ չ'ունենք, ինարկէ, երկրորդական, անտաղանդ կերպով շարադրուած գրուածքները, ինչպէս նաև մանր ոտանաւորները: Այս ամբողջ կիսամեեկում ոչ մի տող չեն գրել այնպիսի տաղանդաւոր վիպագիրներ, ինչպիսիք են Դաւիթ Կըլիաշվիլին և Շիօ Արագվիսապիրելին. երկու փոքր բան է միայն ստեղծագործել նոյնքան տաղանդաւոր գրող — բանաստեղծ պ. Վաժա-Փշաւելան: Վրաց պարբերական հրատարակութիւններում միշտ կարելի է պատահել ընտիր ոտանաւորների, որոնք սովորաբար անհամեմատ բարձր են մեր մամուլում տպուածներից, բայց մենք, ինչպէս ասացինք, այս անգամ չենք զբաղւում այդպիսի գրուածներով: Վրաց գեղարուեստական գրականութեան այնպիսի համբաւաւոր ներկայացուցիչները, ինչպիսիք են Խլիս Շամբաւածէն և

Ակակի ծերեթելին, վաղուց արդէն լոել, «ծերացել են», ոչինչ չեն ստեղծագործում, այլ միայն երեմնակի գրիշը ձեռքբն են առնում այս կամ այն հրապարակախօսական հարցը վճռելու, թունդ վէճեր սարքելու համար... Այդպէս, օրինակ, այս վերջին երկու ամսուայ ընթացքում այ. Ակակի Ծերեթելին անվերջ յօդուածների մի շարք է տպում «Իվերիայում» թատրոնական ընթագման արքայի դէմ, պահանջնելով նրանցից, որ անպատճառ իրանց պաշտպանութեան տակ առնեն վրացերէն ինքուով գըրուած ամեն մի անպէտք ինքնուրոյն պիէսս և սահմանափակեն երոպացի հանձարաւոր գրողների արտադրութիւնների մուտքը վրաց թատրոն... «Յնորիս-Փուրցելի»-ն պատասխանեց ծերունի բանաստեղծին, ի միջի այլոց, նաև մի կարիկատուրայով, որի մէջ մի մեծ բոունցք հալածական է անում վրաց թատրոնի գրան առջնից ծերունազարդ իրսէնին, Հառւպատմանին և Զուղերմանին գոռոցով՝ «Հեռու կացէք, մի պղծէք մեր սրբութիւն սրբոցը»...

«Իվերիան» ծանուցանում է, որ պ. Ճաւճաւածէն էլ (հեղինակ «Հայ գիտնականները և քարերի աղաղակը» գրքի) պատրաստում է՝ այս չորս-հինգ տարուայ լուսթիւնից յետոյ՝ յօդուածների մի նոր շարք: Հետաքրքիր է...

Եթէ ծերունիներին մի կողմը թողնենք, այժմեան նոր վիպագիրներից ամենից բարձր են կանգնած վերոյիշեալ կրկիաշվիլին, Արագիշտիկիրելին և Վաժա-Փշաւելան: Դրանցից առաջինը գրում է Խմերեթի մանր, աղքատացած ազնւականների կեանքից, երկրորդը՝ ինտելլիգենցիայի, իսկ վերջինը ընտրում է իր հերուներին կախեթի լեռներում ապրող քաջառողջ, աղատասէր փշաւներից և իւսուրներից, որոնց մէջ ապրում է նոյնպէս ինքը հեղինակը: Նա գրում է գլխաւորապէս պոէմաներ, որոնք կարդացւում են անպայման յափշտակութեամբ: Վերջելու դա տուել է, ինչպէս ասացինք, երկու փոքր բան: Դրանցից մէկը պոէմա է և կրում է «Աշունը սարում» վերնագիրը («Յնորիս-Փուրցելի», № 2306): Այսեղ պ. Վաժա-Փշաւելան վերցրել է լեռնական հովի կեանքի այն մոմենտը, երբ նա ստիպւաւ է թողնել սարում, ձմեռնամուտի պատճառվ, իր տունուտեղը և իջնել կախեթի տափարակները՝ ոչխարներին քաղցից ու ցրտից աղատելու համար: Նա պէտք է իջնէ անպատճառ, այդ պահանջում է նրա օգուտը, բայց իջնելիս նրա մի ոտը շարունակ յետ է քաշուում, չէ հնազանդուում նրան, որովհետեւ այնտեղ, վերեւում նա թողել է սիրած էակի «սե, փայլուն աչերը, թանձր ծամերը, մեղրալի ձայնը, արշալոյսի նման բացուող ժպիտը»... Եւ այդ սիրածի կարօտով նա

պէտք է տանջուի ներքև մի քանի ծանր ամիսներ, մինչև կըր-  
կն սարը բարձրանալը...

Պ. Վաժա-Փշաւելայի միւս գործը, որ տպուեց նոյնպէս  
«Յնորիս-Փուրցելի»-ում (№ 2323), մի արձակ պատկեր է և  
կոչում է «Պապայի հայեացքները»: Այդտեղ գուրս է բերուած  
մի լեռնեցի առողջամիտ, բարեսիրտ, մարդասէր ծերունի: Նա  
մի օրինակելի նահապետ է, որ մտածում է ոչ միայն իր որ-  
դոց ու թոռների բախտաւորութեան վրայ, այլև համայն աշ-  
խարհի բարօրութեան վայ: Ուշադրութեան արժանի են, ի մի-  
ջի այլոց, նրա մանկավարժական գաղափարները: Երեխային  
մեծացնելիս, չը պէտք է երես տալ, որովհետև «շունն ու երե-  
խան հաւասարապէս անամօթ արարածներ են»:

Մեր ընթերցողների համար, երկի, անհետաքրքրական չի  
լինի լսել, որ վերոյիշեալ հոչակուած երիտասարդդ գրողներից  
պ. Կլղիաշվիլին պաշտօնով սպայ է, Արագվիսպիրելին (կեղծա-  
նուն)՝ անասնաբոյժ և Վաժա-Փշաւելան (կեղծանուն)՝ զիւղա-  
տընտես և ուսուցիչ:

Մեզ մնում է միաբրկու խօսք էլ ասել նորերս մեռած  
(հոկտ. 16-ին) երիտասարդ գրող Դիմիտրի Նադիրաձէի մասին,  
որ յայտնի էր զրականութեան մէջ Պ. Մաշխանելի կեղծա-  
նունով: Նրա պատկերները, ոտանաւորները, յօդուածներն ու  
թղթակցութիւնները կարգացւում էին առանձին հետաքրքրու-  
թեամբ և սիրով, որովհետև նրանք բոլորը բղիսում էին նրա  
զգայուն սրտի խորքից և ներկայացնում ժամանակակից  
գիւղացու ծանր ծանր ցաւերը: Նա իր ամբողջ երիտասարդու-  
թիւնն (42 տարեկան էր) անցկացրեց իր հայրենի Մաշխանի  
գիւղում, որը նրա շնորհիւ դարձել էր մի տեսակ կեղրոնսատե-  
ղի ամբողջ Ծնաղի գաւառի ինտելլիգենցիայի: Նրա ջանքե-  
րով հիմնուեցին Մաշխանի գիւղում՝ օրիորդաց ուսումնարան  
(որի շենքը նուիրեց ինքը՝ իր աղքատ տեղով—այսինքն իր  
ամբողջ կարողութիւնը), գրադարան-ընթերցարան, բժշկանոց,  
ապրանքների պահեստ (ընկերակցական հիմքերի վրայ) և այլն:  
Գիւղացիները պաշտում էին նրան, և նրա յօրինած բրոշիւր-  
ները ձեռքից ձեռք էին անցնում նրանցում: Այդ բրոշիւրնե-  
րից շատ էին հաւանում մանաւանդ մէկը, որ կրում էր «Եղ-  
բայրական խօսք» գրաւիչ անունը:

Մենք առաջ հաղորդել էինք, որ Թիֆլիսում մի քանի տարի պաշտօն վարած, և Ղազարի վանքի միաբան հայր Գաբրիէլ վ. Նահապետեանը մտադրութիւն ունի մի գիրք տպելու Կովկասի հայ և վրացի կաթոլիկների հարցի մասին։ Այժմ այդ գիրքը լոյս է տեսել, և «Իվերիան» նույիրում է նրա քննադատութեանը այնպիսի մի մեծ յօդուած, որ տեղ է բռնում այդ լրագրի վեց համարներում։ Հայր Նահապետեանի աշխատութիւնը կրում է հետևեալ վերնագիրը՝ «Gli Armeni cattolici in Georgia e le questioni fra cattolici Armeni e Georgiani», այսինքն՝ «Հայ կաթոլիկները Վրաստանում և հայ ու վրացի կաթոլիկների միջև ծագած հարցը»։ Այդ իտալերէն գրքոյկի գլխաւոր միտքն այն է, որ Վրաստանում երբէք վրացի կաթոլիկներ չեն եղել, հայերի մէջ կաթոլիկութիւնը տարածուել է այդտեղ միշտն դարերում։ Հայաստանից եկած հայ ունիթուների ձեռքով, վրացի կաթոլիկների հարցը բարձրացել է սրանից ընդամենը 20 տարի առաջ, երբ Կ.-Պոլսի Փերի-Քեոյի կաթոլիկ վանքից մի քանի վրացի վարդապետներ Կովկասեկան և սկսեցին հայ կաթոլիկներին համոզել, որ իրանց վրացի հոչակեն, որպէսզի աւելի արտօնութիւններ վայելեն։ Դրքոյկի վերջին մասում հայր Նահապետեանը խօսում է իր գործունէութեան մասին Ալեքսանդրոպոլիի և Թիֆլիսի հայ-կաթոլիկների համայնքում և մանրամասն նկարագրում այն հալածանքները, որոնց նա ենթարկուել է Թիֆլիսում վրացի-կաթոլիկ վարդապետների կողմից։

Հայր Միխէլ Թամարաշվիլին (վրացի-կաթոլիկ, հեղինակ «Կաթոլիկութիւնը Վրաստանում» ստուարածալ գրքի) աշխատում է միասմի ճերքել իր երկար պատասխանի մէջ հայր Նահապետեանի ասածները, բերելով վկայութիւններ եւրոպական լեզուներով գրուած գրքերից և բարգելով հայ-կաթոլիկների և հայ-լուսաւորչականների զլիսին այն սովորական մեղադրանքները, որոնց նմուշները մենք շատ անզամ ենք բերել այս էջնում և որոնց նորից կրկնելը շատ անհաճոյ է մեզ համար։ Անախորժ և չափից գուրս տարօրիտակ տպաւորութիւն է թողնում մանաւանդ մեղադրանքի այն մասը, որ վերաբերում է հ. Նահապետեանի հայրենասիրութեանը։ Բանից գուրս է գալիս, որ՝ «Իվերիայի» այդ ջերմեանդ կաթոլիկ աշխատակցի կարծիքով հայասիրութիւնը մի յանցանք է և նա չէ համապատասխանում Հռովմի հարազատ որդու պարտականութիւններին... Միթարեան վարդապետի ազգասիրական գործողութիւնների պատմութիւնը հ. Թամարաշվիլին կնքում է այսպէս։ «Հասկանալի է, որ նրա այդօրինակ արարքները գուր կը գային մի-

միայն կաթոլիկների թշնամիներին՝ լուսաւորչական հայերին, որոնց հետ և Նահապետեանը մեծ բարեկամութիւն ունէր և որոնց շատ հարցերում մօտենում էր» («Խվերիա», № 236):

Մեզ թւում է, թէ դեռ շատ երկար կը քաշքուի մեր տեղական մամուլում հայ և վրացի կաթոլիկների կնճռոտ հարցը Կովկասում: Ցաւալի է, որ չ'ունենք մարդիկ, որոնք կարողանային գուտ-գիտական ճանապարհով մօտենալու հարցին, քըն-նելու նրան անաշառ, անկողմնակալ կերպով, առանց ուշագրութիւն դարձնելու այս կամ այն ցեղի անհիմ առարկութիւններին...

Մեր անուանի թատերագրող պ. Գ. Սունդուկեանցը լաւ յարգանք է վայելում վրաց մէջ: Նրա պիէսների մեծ մասը վազուց արդէն թարգմանուած են վրացերէն, և այդ գրուածներից մանաւանդ «Պետօն» ու «Խաթաբալան» աւելի յաճախ են ներկայացւում վրաց բեմի վրայ, քան հայոց: Ներկայ հոկտեմբերի վերջին Թիֆլիսի ազնւականների թատրոնում դարձեալ խաղացւում էր «Խաթաբալան»: Օգտուելով ծերունազարդ գրամատորդի ներկայութիւնից, վրաց թատրոնական հասարակութիւնը այդ երեկոյ մի շատ համակրական և անկեղծ ցոյց արեց նրան: «Ցնորիս-Փուրցելու» յայտնի աշխատակից պ. Սիտղան այսպէս է նկարագրում (№ 2311) այդ դէպքը. «Մեր սառած և մեռելութեան սիրահար թատրոնում տեղի ունեցաւ կիրակի օրը մի կենդանի և մարդու սիրտը տաքացնող տեսարան: Խաղում էին Սունդուկեանցի «Խաթաբալան»: Ներկայացման վերջը բեմ հրաւիրեցին ծերունի հեղինակին և նրան այնպիսի ջերմ ծափահարութեամբ ու ցոյցերով դիմաւորեցին, որոնց նմանը ինձ շատ քիչ է պատահել տեսնել որկիցէ տեղ: Մեր ազգի ամեն մի բարեկամի սիրտը բերկութեամբ կը լցուէր, տեսնելով այդ միասիրտ, անկեղծ, յափշտակուած շնորհաւորական ցոյցը: Բոլոր հանդիսականները դիմաւորեցին գրամատորդին՝ կարծես մի մարդ դարձած և, ինչ խօսք, ոչ ոքի մտքովը չէ անցել այդ բոպէին, որ Գաբրիէլ Սունդուկեանցը վրացի չէ: Թատրոնում տիրում էր կատարեալ համերաշխութիւն, կատարեալ ներդաշնակութիւն և ամենքը յափշտակուած էին գեղարուեստով և նրա այն իդէալով, որ պահանջում է միութիւն, եղբայրութիւն և ճշմարտութիւն՝ ոչ միայն մարդկանց, այլև ամբողջ ազգերի մէջ»...

Տ. ՓիրուիՄԵԱՆ